ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորատի 11.04.2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 15 (տասնհինգ) անդամից 14-ը (տասնչորսը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
4. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
6. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
7. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
8. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն
9. Ա. Մկրտչյան՝ ռազմական ամբիոնի պետ,
10. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
11. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
12. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
13. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
14. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. Նախորդ տարիների ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններից չատեստավորված ուսանողների 2018-2019 ուստարում ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու վճարի չափի մասին

Հաղ.՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն Ն. Ավետիսյան

2. Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով պատմություն 2-րդ կուրսում տիրող իրավիճակի մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

3. Ընթացիկ հարցեր

3.1 2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների ուսումնական պրակտիկայի անցնկացման ժամանակահատվածի, վայրերի մասին

1. ԼՍԵՑԻՆ՝

Նախորդ տարիների ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններից չատեստավորված ուսանողների 2018-2019 ուստարում ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցելու վճարի չափի մասին

Տիկին Ավետիսյանը ներկայացրեց, որ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոն են դիմել նախորդ տարիների ավարտական ամփոփիչ ատեստավորման քննություններից չատեստավորված տասնհինգ ուսանողներ 2018-2019 ուստարում քննություններին մասնակցելու համար, ընդ որում նրանցից երեքը ուսումնառել են ոչ կրեդիտային համակարգով:

Պարոն Սերոբյանը դիմեց ռեկտորոտի անդամներին, թե ինչպիսի՞ առաջարկներ ունեն այս տարվա ամփոփիչ քննություններին թույլատրելու վերոգրյալ ուսանողներին վճարի չափի և դրա հիմնավորման առնչությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Բ. Պողոսյանն առաջարկեց, որ հաշվարկը կատարվի կրեդիտ ժամի արժեքով: Պարոն Սերոբյանն առաջարկեց կրեդիտային համակարգով ուսումնառություն անցած ուսանողների վճարը հաշվարկել կրեդիտ ժամերի արժեքով, իսկ ոչ

կրեդիտային համակարգում ուսումնառած ուսանողներինը՝հաստատագրված գումար սահմանել:
Պարոն Սերոբյանը առաջարկեց հաշվի առնելով այլ բուհերի փորձը սահմանել հաստատագրված գումար՝ 20 000 ՀՀ դրամի չափով:
ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նախորդ տարիների ավարտական աշխատանքը և մագիստրոսական թեզը չպաշտպանած, ամփոփիչ ատեստավորման քննությունները չհանձնած կամ անբավարար ստացած շրջանավարտներին 2018-2019 ուստարում ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պաշտպանությունը թույլատրել վերահանձնելու՝ (հանձնելու) համապատասխան սահմանված վճար մուծելու պարագայում:

1.1 Կրեդիտային և ոչ կրեդիտային համակարգով ուսումնառած ուսանողների համար սահմանել հաստատագրված գումար՝ 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ:
Վերոգրյալ որոշումը ներկայացնել գիտական խորհուրդ՝ հաստատման:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով պատմություն մասնագիտության 2-րդ կուրսում տիրող իրավիճակի մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով պատմություն մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները դիմել են իրեն զեկուցագրով, որպեսզի հայոց պատմություն առարկայի դասախոս Վարդիթեր Աբրահամյանը քննությունը չվարի, այլ պահանջում են այլ մասնագետ՝ պատճառաբանելով, որ դասախոսը իրենց շատ է ծանրաբեռնում և մյուս քննություններին պատրաստվելու համար ժամանակը չի բավականացնում: Պարոն Սերոբյանը նշեց, որ ինքը հանդիպել է ուսանողների հետ, զրուցել, տարբեր լուծումներ առաջարկել, սակայն կուրսում այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ է ստեղծված, որ ուսանողները չեն ուզում տիկին Աբրահամյանի դասին ներկա լինել, իրենց պահանջը նորից պնդում են և երբ պարոն Սերոբյանը նորից հանդիպում է ցանկացել կազմակերպել նրանց հետ, մերժել են և ուզում են հանդիպել հոգաբարձուների խորհրդի նախագահի հետ: Պարոն Սերոբյանը տեղեկացրեց նաև, որ ուսանողները ամբողջ կուրսով չեն մասնակցել նաև վերջնարդյունքներին միտված ստուգողականին և ստուգարքին:

Այնուհետև պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ պատմության և փիլիսոփայության ամբիոնի նիստում որոշում է կայացվել, որ միջանկյալ քննությունների հարցաշարերը դասախոսների կողմից կազմվեն հստակ 24 հարցով: Տիկին Աբրահանյանը դեմ է քվեարկել այդ որոշմանը, ռեկտորին զեկուցագիր ներկայացրել՝ հիմնավորելով իր կարծիքը: Պարոն Սերոբյանը նշեց, որ ինքը իրավաբանի հետ քննարկել ու ուսումնասիրել է այս հարցը և քննությունների

հարցաշարի հարցերի նման սահմանափակում ոչ մի կարգում չի հայտնաբերվել: Նա ընթերցեց ամբիոնի կանոնադրության 2.13.3 կետերը և նշեց, որ սրանով ամբիոնի որոշմանը երբեք էլ գնահատական չի տալիս, սակայն հարցի հետ կապված Տիկին Աբրահամյանի և ամբիոնի վարիչի անհամաձայնություններից, ռեկտորի միջամտությունից հետո, որն ուղղված էր զուտ համաձայնեցված աշխատանքային գործունեության, տիկին Աբրահամյանի կողմից հարցաշարը առաջին կիսամյակում տրվեց 24 հարցով: Սակայն երկրորդ կիսամյակում հարցը նորից խմորման ենթարկվեց, քանի որ հարցաշարը տիկին Աբրահամյանը ներկայացրել էր 36 հարցով, ամբիոնի վարիչ պարոն Խորիկյանի կողմից հարցաշարը և հարցատոմսերը չէին ստորագրվել, պատճառաբանությամբ, որ խախտված է ամբիոնի որոշումը (միջանկյալ քննության հարցաշարերը 24 հարց պետք է ընդգրկեն), որի արդյունքում ուսանողները քննության չներկայացան: Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ ինքը պահանջել է, որպեսզի պարոն Խորիկյանը բացատրություն գրի և հարցատոմսերը չսորագրելու հարցը հիմնովին պարզաբանի: Այնուհետև պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ այս հարցերը այնքան են խորոցել ու բարդացել, որ ոչ մի կողմը չի ուզում փոխզիջումների գնալ, ուսանողները պնդում են, որ քննությունը անցկացվի գրավոր՝ Երևանի բուհերից մեկից հրավիրված մասնագետ դասախոսի միջոցով: Պարոն Սերոբյանը ասաց, որ նախատեսել են քննության օր նշանակել, առարկայի հարցաշարի 36 հարցերը ամփոփել 24 հարցի մեջ՝ խտացնելով դրանք, ինչպես նաև քննությունը մնալու է բանավոր, որն ընթանալու է ձայնագրությամբ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝

Օֆ. Հովհաննիսյանը նշեց, որ միևնույն է ուսանողները չեն գալու քննության, քանի որ պահանջում են, որ այլ դասախոս քննությունն ընդունի: Ուսանողները անբեկանելի որոշում են ընդունել՝ 14 հոգին միասնական չեն գալիս քննության:
Հ. Մելքոնյանին հետաքրքրում էր, թե բուհի գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի կողմից կազմակերպած դասախոսների գնահատման հարցումներում այս կուրսի ուսանողները ինչպես են գնահատել տիկին Ամրահամյանին:
Ա. Սարգսյանը պատասխանեց, որ հարցումները կատարվել են առաջին կիսամյակում և ներկայացրեց հարցումների արդյունքները, որտեղ ուսանողների կողմից տիկին Աբրահամյանը գնահատվել էր բավականին բարձր միավորներով (փաստաթուղթը կցված է):

Պարոն Սերոբյանը արձագանքեց. իսկ ինչով պայմանավորվեց, որ հաջորդ կիսամյակում ընդհանրապես նույն դասախոսի մոտ քննություն հանձնել չեն ուզում ուսանողները:

Վ. Խաչատրյանը ներկայացրեց, որ ինքը զրուցել է ուսանողների և նրանց ծնողների հետ և եզրակացրել, որ ուսանողները ընթացքում չեն ուզում սովորել և եթե դասախոսը պահանջկոտ է ու խիստ, ուրեմն չեն ուզում այդ դասախոսին: Պարոն Խաչատրյանը նշեց, որ իրեն հատկապես դուր չի եկել ուսանողների վերջնագրով խոսելը, որ եթե դասա;խոսին քննությունից չհանենք , ապա իրենք չեն գա քննության:

Պարոն Սերոբյանը Վ. Խաչատրյանին հարցրեց, թե արդյոք նրա կողմից առաջարկ կա, ինչպես վարվել տվյալ պարագայում:

Վ. Խաչատրյանը պատասխանեց, որ ինչքան էլ մեր աշխատանքները համալսարանում ուսանողակենտրոն են, միևնույն է դասախոսը պետք է նաև պաշտպանված լինի և հավելեց,

որ միգուցե մյուս դասախոսներն են քիչ հանձնարարում: Պարոն Խաչատրյանը նշեց նաև, որ ինքը կողմ է հանձնաժողովով քննությունն անցկացնելուն:

Թ. Խաչատրյանի կարծիքով ցանկալի է, որ հանձնաժողովը դրսից լինի, որպեսզի գնահատի նաև հարցաշարի հետ կապված հարցը:

Ռեկտորատի անդամները վերոգրյալ հարցի հետ կապված հակառակ կարծիք արտահայտեցին, նրանք գտնում են, որ հանձնաժողովը պետք է կազմվի բուհի դասախոսներից:

Թ. Մելիքյանը նշեց, որ տարիներ առաջ բուհում եղել է նման նախադեպ և հարցը լուծվել է հանձնաժողովով քննությունն անցկացնելու միջոցով:

Հ. Մելքոնյանը նշեց, որ միևնույն է տվյալ դասախոսին իր դասավանդած առարկայի քննությունն անցկացնելու իրավունքից զրկել ոչ ոք առանց լուրջ հիմքերի իրավունք չունի:

Ե. Սերոբյանը առաջարկեց հանձնաժողովի նախագահ նշանակել ֆակուլտետի դեկանին, անդամներ Վ. Աբրահամյանին և ամբիոնի 3 մասնագետների, որոնք կարդում են «Հայոց պատմություն» առարկան, ինչպես նաև ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահն ու ֆակուլտետի արհմիության խորհրդի նախագահը նույնպես ընդգրկվեն հանձնաժողովի կազմում: Նա հավելեց նաև, որ ուսանողների քննության չներկայանալու պարագայում ստուգումների գնահատականների մուտքագրման ծրագրի բազայում մուտքագրվում է նրանց 0 գնահատականները և տրվում լուծարքի հնարավորություն:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Նկատի առնելով սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով պատմություն մասնագիտության 2-րդ կուրսում տիրող իրավիճակը «Հայոց պատմություն»-4 առարկայի բանավոր քննությունը ձայնագրությամբ անցկացնելու համար հաստատել ժամանակավոր հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Օֆելյա Հովհաննիսյան - Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան

հանձնաժողովի անդամներ՝

1. Վարդիթեր Աբրահամյան
2. Արմեն Հայրապետյան
3. Լիլիթ Ասոյան
4. Լուսինե Պետրոսյան
5. Էմմա Կիրակոսյան- ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ
6. Արտակ Հովհաննիսյան - ֆակուլտետի արհմիության խորհրդի նախագահ

Հանձնաժողովի առաջին 4 անդամները հանձնաժողովի մասնագիտական խումբն են և ունեն գնատատելու իրավունք :

Քննության օր նշանակել ս/թ.-ի ապրիլի 26-ը ժամը 9.00:
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3.1 ԼՍԵՑԻՆ՝

2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման համակարգի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների ուսումնական պրակտիկայի անցնկացման ժամանակահատվածի և վայրերի մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2018-2019 ուստարվա երկրորդ կիսամյակի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման համակարգի 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների մայիսի 2-ից մինչև մայիսի 31-ը ուսումնական պրակտիկայի անցնկացման համար մինչև ս/թ.-ի ապրիլի 30-ը դիմում ներկայացնելու և համապատասխան փաստաթղթեր ունենալու պարագայում թույլատրել ուսումնական պրակտիկայի անցնկացման վայրերի փոփոխություններ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

14 անդամ. կողմ՝ 14, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն	Ն. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և	

արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.նիրավ.ապահովման բաժնի վարիչ՝	Ա. Հովհաննիսյան